«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գնդապետ
_____ Մ. Մուրադյան
«01» ____10____ 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Ռ. Մարանդյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Լ. Ա. Ղազանչյանի, Ա. Գ. Սաֆարյանի և Ա. Ս. Մարգարյանի, քննարկեց

Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ատենախոսությունը նվիրված է արդի իրավագիտության և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի օրակարգային հիմնախնդիրներից մեկի գիտական հետազոտությանը: Միգրացիան ունի սոցիալական, տնտեսական, քաղաքական առանցքային նշանակություն: Միաժամանակ, իրավական գործընթացների և միգրացիայի փոխկապակցվածության ընկալումը հանդիսանում է ազգային և տարածաշրջանային անվտանգության ձեռքբերման անհրաժեշտ տարր: Նշված խնդրի լուծման գործում բարձր նշաձող առաջադրեցին ինովացիոն տեխնոլոգիաների զարգացումը, գլոբալիզացիայի պայմաններում պետական սահմանների նորովի մեկնաբանումը, իմիգրանտների սփյուռքային ինստիտուտների ձևավորումը, իրավական համակարգերի այլակերպումը: Կարևորելով նշված և դրանցից բխող այլ խնդիրների ուսումնասիրությունը՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում իրականացնել Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության հիմնախնդիրների գիտական հետազոտություն՝ ուղենիշ ունենալով միգրացիոն համակարգի արդիականացման և քաղաքացիական հասարակության կառուցման համար անհրաժեշտ տեսական և գործնական խնդիրների լուծումը:

Դոկտորական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տասնութ պարագրաֆ պարունակող չորս գլուխներից, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը,

ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, մեթոդաբանական, տեսական, նորմատիվ հիմքերը, էմպիրիկ բազան, ինչպես նաև՝ գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական, գործնական նշանակությունը, հետազոտության փորձարկումը և արդյունքների ներդրումը:

Ատենախոսության առաջին՝ «Միգրացիայի տեղի և դերի սահմանման տեսական-իրավական հիմնահարցերը» վերտառությամբ գլխում հեղինակը քննարկել է միգրացիա երևույթը իրավագիտական, տնտեսագիտական և սոցիոլոգիական դիտարկումների համատեքստում, անդրադարձել միգրացիայի առաջացման դրդապատճառներին, պետության միգրացիոն քաղաքականության հիմնախնդիրներին, վերլուծել է միգրացիոն գործընթացների միջազգային իրավակարգավորումը՝ հիմնված միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների, առանձին պետությունների միգրացիոն քաղաքականության առանձնահատկությունների վրա:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Միգրացիայի սահմանադրաիրավական կարգավորման ինստիտուցիոնալ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագիրը, լուսաբանված են պետության միգրացիոն քաղաքականության համակարգը, համաշխարհային միգրացիոն նոր գործընթացների ազդեցությունը միգրացիայի սահմանադրաիրավական հիմքերի վրա, ինչպես նաև՝ հայ միգրանտների իրավունքների պաշտպանության գործում միգրացիայի իրավական կառավարման անհրաժեշտությունը: Քննարկվող գլխի շրջանակներում հեղինակն անդրադարձել է նաև Հայաստանի Հանրապետության միգրացիոն պետական քաղաքականության հայեցակարգերին, օրենսդրական հիմնադրույթներին և միջազգային համագործակցությանը:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության առանձնահատկությունները. իրավական բովանդակությունն ու իրականացման հիմնախնդիրները» վերտառությամբ գլխում հետազոտության առարկա են հանդիսացել միգրացիայի տարածմանը խթանող սոցիալական, տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական, էկոլոգիական գործոնների ուսումնասիրությունը, ինչպես նաև դրանց ազդեցությունը հասարակական կյանքի միգրացիոն գործընթացներում, այդ թվում Եվրոպայում և ԱՊՀ պետություններում: Հաջորդիվ, հեղինակը անդրադարձել է անօրինական միգրացիայի տարատեսակ դրսևորումներին, վերջինիս հակազդեցության ուղղություններին, ինչպես նաև անկանոն միգրացիայի կանխարգելման հիմնախնդիրներին Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատանքի չորրորդ գլխում, որը կրում է «Միգրացիոն գործընթացների ժամանակակից համակարգը, առանձնահատկությունները, դրանց կարգավորման հիմնախնդիրներն ու լուծման հիմնական ուղղությունները» խորագիրը, լուսաբանված են Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային միգրացիայի առանձնահատկությունները, ԱՊՀ և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների շրջանակներում միգրացիայի գործընթացների զանգվածային տարածականության հիմնախնդիրները: Քննարկվող գլխի համատեքստում հեղինակն անդրադարձել է նաև միգրացիայի գործընթացների կարգավորման տեղեկատվական ապահովվածությանը, միգրանտների իրավական և սոցիալական ադապտացիային, ինտեգրմանը ու վերաինտեգրմանը, ինչպես նաև Արցախի Հանրապետության քաղաքացիության հիմնախնդիրներին միգրացիոն գործընթացների համակարգում:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ առկա են բովանդակային և ծավալային տարբերություններ ատենախոսության և ատենախոսության սեղմագրի միջև: Դիտարկումը վերաբերում է սեղմագրի 2-րդ գլխի 4-րդ ենթագլխի ներկայացմանը, որտեղ հեղինակը նշում է արդի ժամանակաշրջանում աշխարհի գրեթե բոլոր երկրների միգրացիոն գործընթացներում ներգրավվածության մասին: Այնինչ, ատենախոսության վերը նշված ենթագլխում հեղինակը անդրադարձել է միայն Հայաստանի Հանրապետության միգրացիոն օրենսդրության համակարգին և ռազմավարությանը: Միաժամանակ, սեղմագրում նշված է, որ 4-րդ գլուխը բաղկացած է 5 ենթագլուխներից, իսկ ատենախոսության մեջ այն ներկայացված է 6 ենթագլուխներով: Մեր գնահատմամբ, սկզբունքորեն, նույնական են 4-րդ գլխի 1-ին և 2-րդ ենթագլուխները: Ըստ էության, առնվազն վերնագրերից հնարավոր չէ դրանք տարբերակել: Բացի այդ, 2-րդ գլխի 1-ին ենթագլխի վերնագիրը և բովանդակությունը ընդհանուր հատումներ ունեն 4-րդ գլխի 3-րդ ենթագլխի հետ:

2. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող հինգերորդ դրույթը: Այն գրեթե նույնանում է 2021թվականին ընդունված ՀՀ միգրացիոն պետական կառավարման հայեցակարգում որպես միգրացիոն քաղաքականության ռազմավարական նպատակ ներկայացված Հայաստանում օտարերկրացիների ինտեգրման և վերադարձողների վերաինտեգրման կազմակերպման բարեփոխման, ինչպես նաև Հայաստանում օտարերկրացիների ընդունման միջավայրի բարելավման պետական կառավարման քաղաքականության արժեքների հետ՝ կրթության, առողջապահության, սոցիալական աջակցության հասանելիության մեծացման, իրավունքների պաշտպանության, մշակույթի և քաղաքացիական ինտեգրման, զբաղվածության և տնտեսական ներգրավվածության, Հայաստանում ընդունող և հյուրընկալ միջավայր ստեղծելու ոլորտներում:

3. Հետազոտության պաշտպանության ներկայացվող յոթերորդ դրույթի շրջանակներում հեղինակը, թվարկելով որոշակի կարգավորումներ, նշում է դրանց սահմանադրական ամրագրման անհրաժեշտության մասին: Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության, մասնավորապես, «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխի կարգավորման առարկայի մասշտաբը, կարծում ենք, որ հեղինակի կողմից ներկայացված առաջարկությունները առավելապես վերաբերելի են ոչ թե սահմանադրական, այլ՝ ձևական օրենքի կարգավորմանը: Այնուամենայնիվ, Սահմանադրությունը երաշխավորում է Հայաստանի Հանրապետության կողմից միգրացիոն քաղաքականության արդյունավետ և միջազգային չափանիշներին համապատասխան իրականացման բանաձևը:

4. Հարկ է ուշադրություն դարձնել, ատենախոսության շրջանակներում ներկայացված նոր՝ «պետությունների վիրտուալ տարածք», «վիրտուալ միգրացիա», «վիրտուալ աշխատանքային միգրանտ», «տեղեկատվական-լրատվական միգրանտ», «արհեստական բանականության իրավասուբյեկտություն» եզրույթների սահմանմանը: Կարծում ենք, որ նշված կառուցակարգերի օրենսդրական ինտեգրման գործընթացը կարող է ոչ ամբողջական լինել, եթե վերը նշված ինստիտուտների համատեքստում ներկայացված չեն վերջիններիս նկատմամբ իրավունքի գերակայությամբ պայմանավորված վերահսկողական անհրաժեշտ մեխանիզմները: Ինչի արդյունքում, ինստիտուցիոնալ լուծումները դատապարտված են հռչակագրային բնույթ ունենալուն:

5. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, օգտագործված գրականության ցանկի «Մասնագիտական գրականություն, զեկույցներ և տեղեկատվական այլ աղբյուրներ» բաժնի աղբյուրների պարագայում բացակայում են հրատարակությունների էջերի ընդհանուր քանակի վերաբերյալ տեղեկությունները: Բացի այդ, նպատակահարմար կլիներ նշել

նաև «Նորմատիվ իրավական ակտեր, օրենքներ, հրամանագրեր» բաժնի աղբյուրների պաշտոնական, այդ թվում՝ պաշտոնական էլեկտրոնային աղբյուրները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Աշոտ Սերյոժայի Հայրապետյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» խորագրով դոկտորական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2022 թ. հոկտեմբերի 21-ի նիստում, արձանագրություն թիվ 3:

Ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գ. Մալխասյան